

**ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ «ՄԻԼԼԵԹՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ»  
ԵՎ «ՀԱՅ ՄԻԼԼԵԹԻ» ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ<sup>1</sup>**

*Բանալի բառեր – Օսմանյան կայսրություն, միլլեթների համակարգ, ազգային-կրոնական փոքրամասնություններ, թուրքական պատմագրություն, «հայ միլլեթ»*

Ասիական և եվրոպական երկրների հսկայական տարածքների նվաճումների արդյունքում ձևավորված բազմազգ ու բազմակրոն Օսմանյան կայսրությունում որպես ինքնության կարևորագույն հատկանիշ էր ընկալվում կրոնական պատկանելությունը<sup>2</sup>, որին ստորադասվում էր ազգային գործոնը: Օսմանյան իշխանությունների համար դարեր շարունակ այդ բազմազգ երկրում առաջնային էր հպատակների ոչ թե թուրք, արաբ, ալբանացի, բոսնիացի, հույն, սերբ, բուլղար, հայ կամ հրեա, այլ մուսուլման, քրիստոնյա, հուդայական լինելը<sup>3</sup>:

Աներկբա է, որ օսմանյան սուլթանները ոչ մուսուլման հպատակների վարչական արդյունավետ կառավարումը իրականացնելու համար խիստ կարևորում էին միլլեթների համակարգը, սակայն ցայսօր պատմագիտության մեջ առկա են էական տարընթերցումներ (անգամ խառնաշփոթ) օսմանյան կրոնապետության ոչ մուսուլման համայնքների տարանջատումն ըստ կրոնական և էթնոդավանական սկզբունքների, իրավական համակարգի պատմական զարգացման համատեքստում նույնիսկ միլլեթ եզրույթի ընկալման պարագայում: Միլլեթ (արաբ․ ﻣﯩﻠﻠﺔ, թուրք․ millet) բառն օսմաներենում և թուրքերենում նշանակել է թե՛ «ազգ, ազգություն, ժողովուրդ» և թե՛ «կրոնական (դավանական) համայնք», ունեցել է նաև դավանական պատկանելության իմաստ<sup>4</sup>:

XVI-XVIII դդ. օսմանյան ձեռագրերում ոչ մուսուլման բնակչության բն-

<sup>1</sup> Հոդվածը պատրաստվել է «Համշենահայությունն Օսմանյան աշխարհագիր մատյաններում և հայկական ձեռագրերում. Հիմնահարցի մերօրյա գիտական և քաղաքական շահարկումները», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակում, ծածկագիր՝ 18T-6A065, Isahakyan@ysu.am, alexandersafaryan@ysu.am, diana.hayrapetyan@ysu.am:

<sup>2</sup> Տե՛ս **Berkes N.**, The Development of Secularism in Turkey, New York, Routledge, 1998, p. 14:

<sup>3</sup> **Davison R.**, Turkish Attitudes Concerning Christian-Muslim Equality in the Nineteenth Century // “The American Historical Review”, 1954, vol. 59, n° 4, p. 844-864.

<sup>4</sup> Տե՛ս **Մաֆարյան Ա.**, Զիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», Երևան, 2012, էջ 116-117: Տե՛ս և հմմտ. Ana Britanica (Genel Kültür Ansiklopedisi), cilt 23, İstanbul, 1994, s. 1, **Demiray K.**, Temel Türkçe Sözlük, 3 Bask, İstanbul 1994, s. 576:

րոշման համար օգտագործվել է նաև «թափֆե քաֆիրլեր» (tâife kâfirler - کافرلر طائفه) եզրույթը (tâife - արաբ. طائفه, թուրք. taife մարդկանց խումբ, ցեղ, kâfir - արաբ. کافر անհավատ, ոչ մուսուլման), որով տարանջատվում էր նաև Հույն ուղղափառ եկեղեցու տիեզերական պատրիարքի (Ecumenical Patriarch) ենթակայության տակ գտնվող Օսմանյան կայսրության բնակչությունը (բնականաբար այն թվապես գերազանցում էր մյուս բոլոր քրիստոնյաներին)<sup>1</sup>:

Օսմանյան փաստաթղթերում (ինչպես նաև Ղուրանում) միլլեթ եզրույթի կոնկրետ իմաստով գործածությունը ևս տարաբնույթ բանավեճերի առարկա է դարձել: Ըստ Բենջամին Բրաուդի և արևմտյան այլ օսմանագետների՝ այն նշանակել է կրոնապես ինքնորոշված խումբ և մինչև XIX դ. «կրոնական համայնք» իմաստով կիրառվել է մուսուլմանների և Օսմանյան կայսրության տարածքից դուրս բնակվող քրիստոնյաների հավաքականությունը սահմանելու համար: Այն հանդիպում է օսմանյան փաստաթղթերում մեջբերվող հաղիմներում, որտեղ քրիստոնյաները և մյուս ոչ մուսուլմանները (կամ բոլոր «անհավատները») համարվում են մեկ միլլեթ: Արևմտյան տարբեր հետազոտողներ փաստում են, որ իրականում «Աբրահամի ժողովուրդ» հանրությունը, այն է՝ հրեաներին, քրիստոնյաներին և մուսուլմաններին «միավորող» միլլեթ եզրույթը, ամեննին չի նույնանում բառի՝ օսմաներեն ընկալման և օսմանյան վարչաիրավական պրակտիկայի հետ<sup>2</sup>:

Նախքան բարեփոխումների ժամանակաշրջանը Օսմանյան կայսրությունում միլլեթ եզրույթը կիրառվում էր մուսուլմանական համայնքի համար՝ ի հակադրություն զիմմիների՝ Օսմանյան պետությունում մշտապես բնակվող օսմանահպատակ ժողովուրդների (արաբ. ذمي, թուրք. zimmî), և այս համատեքստում այն օգտագործվել է մասնավորապես սուլթան և խալիֆ Սուլեյման Փառահեղից (1520-1566) հետո «երկրորդ կրոնական հեղինակության» շեյխու-ուլ իսլամ Էբու Սուլուդ էֆենդիի (1490-1574) իրավական մեկնության մեջ<sup>3</sup>: Փաստորեն, ըստ Բրաուդի, միլլեթ եզրույթը ի սկզբանե չի վերաբերել ոչ մուսուլմաններին: Որպես ապացույց նշվում է այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրության ծաղկման ժամանակաշրջանում հարկային, հողային գրանցամատյաններում, դատարանների որոշումներում միլլեթը չի օգտագործվել ոչ մուսուլման հպատակներին տարրորոշելու համար: Որպես քրիստոնյաների և հրեաներին տարբերակող եզրույթ այն հիշատակվում է XVIII դարի պատմիչ Ռաշիդի աշխատության՝ եվրոպական տիրակալներին

<sup>1</sup> Տե՛ս **Stamatopoulos D.**, From Millets to Minorities in the 19<sup>th</sup> – Century Ottoman Empire: an Ambiguous, Modernization, Citizenship in Historical Perspective, Pisa, 2006, p. 253-273:

<sup>2</sup> Տե՛ս **Braude B.**, Foundation Myths of the Millet System // **Braude B.** and **Lewis B.** (eds.), Christians and Jews in the Ottoman Empire, vol. I, The Central Lands, New York and London, 1982, p. 69-90, **Quataert D.**, The Ottoman Empire, 1700-1922, Cambridge University Press, 2005, p. 175-176, **Ursinus, M.O.H.**, “Millet” // **Bearman P.**, **Bianquis Th.**, **Bosworth C.E.**, **Donzel E. van,** **Heinrichs W.P.**, Encyclopaedia of Islam, 2<sup>nd</sup> ed., Brill, 2012:

<sup>3</sup> Տե՛ս **Braude B.**, նշվ. աշխ., էջ 69-70:

ուղղված սուլթանական պաշտոնական նամակագրության մեջ<sup>1</sup>: Ըստ մի շարք հեղինակների՝ բառի օսմաներեն կիրառությունը ենթադրել է կայսրության տարածքից դուրս բնակվող քրիստոնյաներին<sup>2</sup>:

Միննույն ժամանակ կան արքունական պահպանված նամակներ, որտեղ ազդեցիկ քրիստոնյաներին և հրեաներին ևս կոչում էին միլլեթ: Կայսրության տարածքում բնակվող «հասարակ» ոչ մուսուլման բնակչության համար օգտագործում էին *İseviye, Nasraniye, Mesihiye* եզրույթները (առավելապես՝ արտասահմանյան գրագրության մեջ): Շրջանառվող ներքին փաստաթղթերում կայսրության հպատակ քրիստոնյաների համար գործածվում էին առավել «կոնկրետ» կամ «սուր» էթնոկրոնական անվանումներ՝ Rumi, Ermeni, Latin (Roman Catholic): Հավելենք, որ *Nasraniye* կամ *Nasara* անվանումները հանդիպում են արաբախոս տարածքներին վերաբերող փաստաթղթերում (հրեաները հիշատակվում են նաև *Yahudi* և *Musevi* տարբերակներով): «Առավել ներառական» էին գերբան կամ գեբր (*gebran, gebr* «քրիստոնյա» – անհավատ, բառացի թարգմանությամբ՝ նաև «հեթանոս») և դիմիմի (*dhimmi, թուրք. արտասանությամբ՝ զիմմի – zimmī*) որակումները: Զիմմիներին տարանջատելու համար կիրառվում էին նաև ընդհանուր տարածում գտած թաիֆե (*taife*) և ջեմաաթ (*cemaat*) բառերը<sup>3</sup>:

Մայրը Ուրսինուսը պնդում է, որ ոչ մուսուլման բնակչության տարրորդման համար միլլեթը կիրառվել է նաև XIX դարից առաջ<sup>4</sup>: Այնուամենայնիվ, այն վերոնշյալ իմաստով կայուն գործածության մեջ է մտել հենց XIX դարում՝ օգտագործվելով մեկ այլ՝ «ազգ» (հմմտ. անգլ. *nation*) իմաստով ևս: Այսպիսով, թանգիմաթից հետո կայուն իմաստով շրջանառվող այս տերմինը ժամանակակից թուրք և արևմտյան պատմագրության մեջ հաճախ վերագրվում է Օսմանյան կայսրության ամբողջ պատմության ընթացքում գոյություն ունեցող «համակարգին» և իրողություններին:

Օսմանգիտական և հայագիտական գրականության մեջ ավանդական է կայսրության հպատակների՝ «հասարակական-կրոնական շերտավորման» հետևյալ տարբերակումը՝ մուսուլմաններ, զիմմիներ՝ խարաջ (գլխահարկ) վճարողներ<sup>5</sup>, ինչպես նաև հարբի (արաբ. *حربي* - *harbī*, թուրք. *harbi.*, հմմտ. նաև *Darül-Harp*)՝ իսլամի գերիշխանության տիրույթներից դուրս ապրողներ<sup>6</sup>: Դրա հետ մեկտեղ Օսմանյան կայսրությունում և իսլամական (թուրք-իսլամական) այլ պետություններում կային հասարակական-իրավական

<sup>1</sup> St' u **Rašid**, *Tarih Rašid*, İstanbul, 1865, vol. 2, p. 587-588:

<sup>2</sup> St' u **Kurat A.**, *İngiliz Devlet Arşivinde ve Kütüphanelerinde Türkiye Tarihine Ait Bazı Malzemelere Dair*, Ankara Üniversitesi Dil ve Tarih Coğrafya Fakültesi Dergisi, 7, 1949, s. 19:

<sup>3</sup> **Braude B.**, նշվ. աշխ., էջ 72:

<sup>4</sup> **Ursinus, M.O.H.**, նշվ. աշխ.: Հմմտ. **Quataert D.**, նշվ. աշխ., էջ 175-176:

<sup>5</sup> St' u և հմմտ. *Türkçe Sözlük*, TDK, 10. Baskıdan Yapılan Tıpkıbasım, Ankara, 2009, s. 2238:

<sup>6</sup> St' u **Devellioğlu F.**, *Osmanlıca Türkçe Ansiklopedik Lûgat*, 5, Baskı, Aydın Kitabevi, 1982, s. 1049:

երկու տարբեր կարգավիճակներ՝ ղեկավար խավ՝ ասքեր (արաբ. عسكر, թուրք. asker զինվոր, զինվորական ծառայություն) և ենթակա խավ՝ ռայա (հմմտ. արաբ. رعايا – Re‘āyā, թուրք. raya/reaya – սուլթանի հպատակ ոչ մուսուլման, քրիստոնյաներ<sup>1</sup>), այն է՝ հարկատուների խումբ, որը չէր մասնակցում երկրի ղեկավարման գործընթացին և զինապարտ չէր: Պրոֆ. Հիթթին և սրբ. Էդվին Փիրսը փաստում են բառի՝ ոչ մուսուլման օսմանահպատակների նկատմամբ արհամարհանքի երանգը՝ պնդելով, որ թուրքերը այն կանխամտածված էին օգտագործում՝ ընդգծելու համար սեփական գերակա դիրքը<sup>2</sup>:

Մուսուլման օսմանահպատակները կազմում էին մեկ «եղբայրություն» ումնա (արաբ. أمة, թուրք. ümmet), որտեղ համայնքի անդամներն իրավահավասար էին՝ անկախ էթնիկ պատկանելությունից կամ լեզվական տարբերություններից: Հետևաբար սուննի մուսուլմանները միավորված էին արտոնյալ «իսլամի ժողովուրդ» («Millet-i İslamiye, Millet-i Muslime») «հասարակական շերտի» կամ «դասակարգի» մեջ<sup>3</sup>: Պետական համակարգը պաշտոնապես կարևորում էր կրոնական կամ միջկրոնական «անդորրը», միաժամանակ օսմանյան իշխանավորներն ալևիներին, արաբ շիաներին, եմենյան զեյդիականներին և լիբանանյան դրուզներին ընկալում էին որպես «աղանդավորներ»<sup>4</sup>:

Օսմանյան կայսրության պատմության «դասական» շրջանում կենտրոնական իշխանությունը որպես միլլեթ պաշտոնապես ճանաչում էր հունական (Հույն ուղղափառ), հայկական (Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդներ) և հրեական համայնքները<sup>5</sup>: Հատկանշանական է, որ հունական համայնքում ներառված էին Բալկանների և Փոքր Ասիայի ամբողջ հունադավան-ուղղափառ քրիստոնյաները (ներառյալ՝ ոչ հույն բնակչությունը), որոնք, ինչպես արդեն նշել ենք, ենթարկվում էին Կոստանդնուպոլսի հույն՝ Տիեզերական պատրիարքին: Հայկական համայնքում հիմնականում հայերն էին, բայց նաև՝ Հայոց Պատրիարքին ենթակա Եգիպտոսի դպտիները, պավլիկյանները և բոզոմիլները<sup>6</sup>: Հրեական համայնքում ներառված էին բոլոր հրեաները (ներառյալ՝ աշկենազները, սեֆարդները<sup>7</sup>, ռոմանիոսները<sup>8</sup>): Հրեական միլլեթին

<sup>1</sup> Տե՛ս և հմմտ., Баскаков А. Н., Турецко-русский словарь, Москва, 1977, с. 732:

<sup>2</sup> Տե՛ս Abu-Jaber K. S., The Millet System in the Nineteenth-Century Ottoman Empire // The Muslim World, vol. 57/3, July 1967, p. 212-223:

<sup>3</sup> Տե՛ս Kuran E., Türkiyenin Batılaşması ve Milli Meseleler, Ankara, 1997, s. 25:

<sup>4</sup> Տե՛ս Ortaylı İ., Osmanlı İmparatorluğunda İktisadi ve Sosyal Değişim, Ankara, 2000, s. 213-221:

<sup>5</sup> Տե՛ս Braude B. and Lewis B. (eds.), նշվ. աշխ., էջ 85:

<sup>6</sup> Տե՛ս Sugar P., Southeastern Europe under Ottoman Rule, 1354-1804, Washington, 1977, p. 37-55:

<sup>7</sup> Աշկենազները միջնադարյան Եվրոպայում ձևավորված հրեա ժողովրդի ենթաէթնիկ խումբն էին, որը խոսում էր իդիշ լեզվով: Սեֆարդները հուդայական ենթախումբ էին, որը հիմնականում ձևավորվել է արաբական երկրներում, ինչպես նաև միջնադարյան Իսպանիայում: Տե՛ս <http://www.languages-study.com/yiddish/Laplancdec.html>:

<sup>8</sup> Ռոմանիոսները Բյուզանդական կայսրության տարածքում ձևավորված հրեա ժողովրդի ենթախումբ էին: Տե՛ս <http://www.eleven.co.il/diaspora/ethno-linguistic-groups/13575/>:

բնորոշ էր առավել ապակենտրոնացված «վարչական» կառուցվածքը: Հատկանշական է նաև, որ եվրոպական պատմագրության մեջ ընդգծվում է այն հանգամանքը, որ հույն-ուղղափառ և հայկական միլլետները պաշտոնապես ճանաչվել են դեռևս XV դարում, իսկ հրեականը՝ XIX դարում<sup>1</sup>:

Ոչ մուսուլմանները բաժանված էին երկու խմբի՝ զիմմի և մյուսթեմեն (կայսրության տարածքում ժամանակավորապես գտնվող օտարերկյա հպատակներ): Ենթադրվում էր, որ զիմմիներն ունեին ապահովության ավելի մեծ պետական երաշխիքներ<sup>2</sup>: Նրանց իրավական կարգավիճակի կենսագործումը դիտարկվում էր նոր նվաճված տարածքներում Օսմանյան կայսրության շարիաթի հաստատման առաքելության ծիրում: Օսմանյան կրոնապետության առջև զիմմիների հիմնական դուրանական ամրագրամբ պարտականությունը ջիզլե – գլխահարկի<sup>3</sup> (արաբ. جزيه, թուրք. cizye) և խարաջ-հողահարկի (արաբ. خراج, թուրք. haraç/ci) վճարումն էր<sup>4</sup>: Ենթադրվում էր իսլամական պետության և նրա ոչ մուսուլման հպատակների միջև «պարտավորություն-համաձայնություն» զիմմեթ (արաբ. ذمّة, թուրք. zimmet), որով որոշակի պարտականությունների դիմաց ընձեռվում էին «արտոնություններ»: Կրթական, իրավական ու տնտեսական գործերում զիմմիները ստանում էին հոգևոր-մշակութային «ինքնավարություն»<sup>5</sup>: Հավելենք, որ նրանց ներհամայնքային ինքնավարությունը կանոնակարգվեց XIX դարում:

Օսմանյան կարգի՝ նիզամի (թուրք. nizam) հիմքում ընկած էր արդարության (արաբ. عدالة, թուրք. adalet) սկզբունքը, որը թուրք պատմաբանների պնդմամբ տարածվում էր և՛ իշխանավորների, և՛ աշխատավոր ժողովրդի վրա՝ սահմանելով ու պաշտպանելով համայնքի անդամների (ըստ արժանիքների) իրավունքները<sup>6</sup>: Կրոնական համայնքի արտոնությունները սահ-

---

<sup>1</sup> Տե՛ս **Stamatopoulos D.**, նշվ. աշխ., էջ 253-272, **Braude B. and Lewis B.** (eds.), նշվ. աշխ., **Gülnihal B.**, Alman-İngiliz Belgerinin ve siyasi gelişmelerin ışığı altında, Gayrimüslim Osmanlı vatandaşlarının hukuki durumu (1839-1914), [The Legal Status of the Non-Muslim Ottoman Subjects under the Light of the German-English Documents and Political Developments], Ankara, 1989, **Bilal E.**, Osmanlı Devletinde Gayrimüslim Tebaanın Yönetimi, [The Administration of the non Muslim Subjects in The Ottoman State], İstanbul, 1996, **Anagnostopoulou S.**, The Passage from the Ottoman Empire to the Nations-State, İstanbul, 2004, p. 37-55:

<sup>2</sup> **Bosworth C. E.**, The Concept of Dhimma in Early Islam, Christians and Jews in The Ottoman Empire, New York-London, 1982, p. 37-51.

<sup>3</sup> Գոյություն ունեւ ջիզլիւ հարկատեսակի երեք չափաբաժին՝ հարուստները (ալա), վճարում էին 48 արծաթե դիրիսեմ (հեծելագորում ևս մեկ լրացուցիչ հեծյալի հետ զինվորական արշավանքներին մասնակելու հավասարագոր գումար), միջին խավը (էվսաթ)՝ 24 արծաթե դիրիսեմ (հեծելագորում արշավանքներին մասնակցելուն հավասարագոր գումար), աղքատները (էդնա)՝ 12 արծաթե դիրիսեմ (արշավանքներում որպէս հետևակ մասնակցելուն հավասարագոր գումար):

<sup>4</sup> Տե՛ս **Сквозников А.**, Правовое положение немусульманских подданных в Османской империи в XVI-XIX вв. Проблема теории и истории государства и права // «Вестник Самарской гуманитарной академии», серия «Право», 2015, № 1-2 (17), с. 3-14:

<sup>5</sup> Տե՛ս **Braude B. and Lewis B.** (eds.), նշվ. աշխ., էջ 35:

<sup>6</sup> Տե՛ս **Сквозников А.**, նշվ. աշխ., էջ 8:

մանվում էին հատուկ բերաթներով: Համայնքային հաստատությունների իրավասությունները հաճախ չէին համապատասխանում մերօրյա վարչա-իրավական ընկալումներին:

Հարկ ենք համարում նշել, որ էթնոկրոնական նմանօրինակ համայնքներ գոյություն են ունեցել Փոքր Ասիայի, Բալկանների և Մերձավոր Արևելքի տարբեր երկրներում դեռևս նախքան թյուրքական տարրի հաստատումը: Ոչ մուսուլման համայնքների ներքին ինքնավար ղեկավարման համակարգը կիրառվել է նաև մուսուլմանական այլ երկրներում, որը շատ ընդունելի տարբերակ էր նաև թյուրքերի համար, քանի որ կայսրության ոչ մուսուլման բնաչությունը տևական ժամանակ թվապես գերազանցում էր թյուրքերին<sup>1</sup>: Օսմանյան կայսրության բնակչությունը XV դ. վերջում միավորված էր միլլեթների համակարգում: Միլլեթներն ունեին իրավական որոշակի ինքնավարություն, այսինքն՝ համայնքի անդամները կարող էին ներհամայնքային հարցերը լուծել ըստ ազգային և կրոնական ավանդույթների: Միլլեթի ղեկավարին՝ միլլեթ-բաշիին, հաստատում էր սուլթանը: Միլլեթների համակարգի վարչական ղեկավարման տեսանկյունից յուրաքանչյուր համայնքի համար կարևորվում էր (դեռևս Մեհմեդ II-ի ժամանակաշրջանից) պետական ծառայողի կարգավիճակով ղեկավարի նշանակումը: Ինչպես գերադասում են «վկայել» թյուրք պատմաբանները, սուլթան Մեհմեդ II-ը Բյուզանդական կայսրությունից «ժառանգած» ուղղափառ եկեղեցին «վերակենդանացնելու» համար նշանավոր Գեորգիոս Սքոլարիոս Գենադիոսին «կարգեց» պատրիարք: Հրեաների համար ստեղծվեց հահամբաշիի պաշտոնը: Հայերի պարագայում նշվում է, որ «Անատոլիայում» դարեր շարունակ ապրող հայ համայնքի համար «միլլեթ-բաշի» նշանակվեց Բուրսայի եպիսկոպոս Հովակիմը, որը դարձավ առաջնորդ-ղեկավար և միավորեց օսմանյան տարածքում ապրող բոլոր հայերին<sup>2</sup>: Սակայն այս փաստը վիճարկել է Գ. Բարդակյանը<sup>3</sup>: Թյուրքական պատմագրության մեջ փորձ է արվում ստեղծել այնպիսի տպավորություն, որ Կ. Պոլսում հայկական պատրիարքարանի հիմնադրումը բացառիկ հայանպաստ մի որոշում էր, իսկ պատրիարքը վայելում էր Օսմանյան կայսրության հայերի համընդհանուր սերն ու հարգանքը: Մինչդեռ ակնհայտ է, որ հայ համայնքն արդեն վաղուց ուներ իր հոգևոր կենտրոնները՝ նվիրապետական աթոռները Էջմիածնում, Միսում, Աղթամարում, Երուսաղեմում, իսկ սուլթանական այդ «առանձնաշնորհը» ուներ կայսերապետական հստակ միտում:

Այսպես, 1441 թ. Անկարայի հայերը միավորված էին Միսի կաթողիկո-

---

<sup>1</sup> Տե՛ս Сафонов А., Османская административно-правовая система на Балканах (XV-XVIII вв.) // «Историко-правовые проблемы: новый ракурс», 2012, с. 121-133:

<sup>2</sup> Տե՛ս Ortaylı İ., Osmanlı İmparatorluğu'nda Millet Sistemi, Türkler, X, Ankara, 2002, s. 216-220:

<sup>3</sup> Տե՛ս Bardakjian K. B., The Rise of the Armenian Patriarchate of Constantinople // Christians and Jews in the Ottoman Empire, New York, London, 1982, p. 89-100:

սարանին ենթարկվող եպիսկոպոսի շուրջ: Ավելի ուշ՝ 1458-1646 թթ., ոմն Ներսես իրեն հռչակեց Անկարայի հոգևոր առաջնորդ: Մոտավորապես 1447 թ. հետո, բայց նախքան 1459 թ., երբ Հովակիմն այլևս եպիսկոպոս չէր Կոստանդնուպոլսում, նրան փոխարինում է ոմն Մարտիրոս: Այսինքն՝ միաժամանակ կային չորս հոգևոր առաջնորդներ, որոնց ազդեցության տարածքը, ցավոք, ըստ հայկական սկզբնաղբյուրների տվյալների, հնարավոր չէ որոշակիացնել: Որպես բացառիկ հանդուրժողականության-բարյացակամության դրսևորում է ներկայացվում Ստամբուլում Մեհմեդ II-ի հիմնած հայկական «կենտրոնական» եկեղեցին: Փաստորեն, թուրքական պատմագրությունը փորձում է ցույց տալ, որ սրանով օսմանյան իշխանությունը համայքները միավորեց կենտրոնական իշխանության շուրջ՝ առավել դյուրին դեկավարում իրականացնելու համար, միաժամանակ եկեղեցուն տրվեց պետական պաշտոնյայի կարգավիճակ, քանի որ համայնքների առաջնորդները նշանակվում էին սուլթանի ֆերմանով և պատասխանատու էին նրա առջև: Բայց սա տեղի ունեցավ ավելի ուշ:

Հետագա դարերի իրողությունների համադրությունը տալիս է բոլոր հիմքերը պնդելու, որ եկեղեցին իշխանությունների ձեռքին սուկ վարչական գործիք էր: Ամուսնական և ընտանեկան իրավական բնույթի ներհամայնքային վեճերը լուծվում էին համայնքային դատարաններում, որոնց վճիռները, սակայն, ոչ թե պարտադիր էին, այլ խորհրդատվական, և վճիռը կյանքի էր կոչվում միմիայն կողմերի համաձայնության դեպքում: Օսմանյան իշխանությունները ճանաչում էին համայնքային դատարանների վճիռները, բայց դրանց պարտադիր կատարումը պաշտոնապես չէր երաշխավորվում: Եկեղեցիների դատական «լիազորությունները» տևեցին մինչև XVIII դ.: Միլլեթների համակարգի հիմքում դրված էր հավատների և անհավատների միջև գոյաբանական տարբերությունը. խտրական այս մոտեցումը դեռևս 638 թ. արմագրվել էր խալիֆ Ումարա իբն Ալ-Խաթթաբայի և Երուսաղեմի՝ նվաճված ժողովուրդների միջև կնքված պայմանագրով: Թեև բոլոր բնակիչները պաշտպանված էին պետության կողմից, բայց ոչ բոլորն ունեին նույն իրավական պաշտպանվածությունը և հասարակական դիրքը. ոչ մուսուլման բնակիչները հասարակական-քաղաքական և իրավական առավել ցածր կարգավիճակում էին՝ ի տարբերություն մուսուլմանների: Ոչ մուսուլմաններին արգելվում էր վկայություն տալ դատարաններում, նրանք պարտավոր էին վճարել լրացուցիչ հարկեր, արգելվում էր կառուցել պաշտամունքի նոր վայրեր՝ եկեղեցիներ և այլն, ոչ մուսուլմանները պետք է կրեին նաև հատուկ հագուստ<sup>1</sup>:

Թեև միլլեթների համակարգը խարսխված էր կրոնական հանդուրժողականության վրա, իրականում այն պարունակում էր համակարգային քո-

---

<sup>1</sup> Տե՛ս **Bozkurt G.**, Alman-İngiliz Belgelerinin ve Siyasi Gelişmelerin Işığında Gayrimüslim Osmanlı Vatandaşlarının Hukuki Durumu 1839-1914, Ankara, 1996, s. 56, **Փափազյան Ա.**, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Երևան, 1999, էջ 42-48:

ղարկված անհավասարություն: Զիմմիների գոյությունը, կրոնական պաշտամունքը հանդուրժվում էին ի հաշիվ անհավասար հարկահանության և պարտականությունների: Լայնորեն տարածված էր նաև ենիչերական գորամիավորումները համալրելու նպատակով իրականացվող քրիստոնյա արուզավակների հավաքագրումը (դեվշիրմե)<sup>1</sup>: Սովորական էր դարձել նաև հայ պատմագրության մեջ հիշատակվող «աղջկա ահ» կոչող՝ աղջիկներ հավաքագրելու երևույթը<sup>2</sup>: Ոչ մուսուլմանները պարտավոր էին հարգանք ցուցաբերել մուսուլմանների նկատմամբ՝ ոտքի կանգնել մուսուլմանների ներկայությամբ, մուսուլման ճանապարհորդներին տրամադրել սնունդ և կացարան: Ստամբուլում քրիստոնյաները իրավունք ունեին ապրել չորս շրջաններում և միայն այնտեղ կարող էին ունենալ իրենց եկեղեցիները: Սկզբում պատրիարքի նստավայրն առաքելական եկեղեցին էր, իսկ 1454 թվականից՝ Պամակառիստոս վանքը: Քրիստոնյա եկեղեցու գոյությունն Օսմանյան կայսրությունում նախ և առաջ ապահովում ու դյուրացնում էր կայսրության վարչական ղեկավարումը: Տրապիզոնից և հարևան քաղաքներից 5000 քրիստոնյա ընտանիք բռնագաղթվեց Ստամբուլ: Զիմմիները, փաստորեն, ունեին ճորտական-կախյալ կարգավիճակ: Այսինքն՝ օսմանահպատակների իրավունքներն ու պարտականությունները ի վերուստ սահմանվում էին կրոնահամայնքային պատկանելության հիման վրա:

Առաջին սուլթանները ենթակա ժողովուրդներին ու եվրոպացիներին որոշակի իրավունքներ էին տվել, սակայն դա ինքնին արտացոլում էր այն արհամարհանքը, որն առկա էր բոլոր ոչ մուսուլմանների հանդեպ: Կապիտուլյացիաներից հետո եվրոպացիները Օսմանյան կայսրությունում ունեին իրենց դատարանները, բանտերը, փոստային գրասենյակները ու այլ հաստատություններ: «Արտոնություններն» ամեննին բարեգթության-մեծահոգության դրսևորում չէին. քրիստոնյաները դիտարկվում էին որպես «պիղծանարժան» արարածներ: Սուլթանները, որոշ ազգերի՝ հույներին, հայերին տալով միլլեթի՝ համայնքի կարգավիճակ, չէին խթանում նրանց անկախության կամ իրական ինքնավարության բնական ձգտումը: Արևմտյան հեղինակները չէին կարող չարձանագրել այն իրողությունը, որ խտրականությունը մշտապես աչքի էր զարնում անզամ կենցաղում (այն շինությունը, որտեղ քրիստոնյա էր բնակվում, չպետք է աչքի ընկներ, սահմանափակվում էին եկեղեցիների զանգակատուն ունենալու, քրիստոնյաների քաղաքում ձիով շրջելու իրավունքները): Ինչպես փաստում էր Հ. Մորգենթաուն,

---

<sup>1</sup> Տե՛ս **Զուլայան Մ. Կ.**, Դեվշիրմեն (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների // «ՊԲՀ», 1959, թիվ 2-3, էջ 247-256:

<sup>2</sup> Տե՛ս **Անասյան Հ.**, Թուրքական Ֆութուվվաթը եւ հայերը, Անթիլիաս, 1994, էջ 225-226, **Հակոբյան Վ. Ա.**, Մանր ժամանակագրություններ, հ. 1, Երևան, 1951, էջ 169-171, **Զուլայան Մ. Կ.**, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երևան, 1980, էջ 330: Հմմտ. Մատենադարանի ձեռ. թիվ 6273, էջ 6:



«թուրքն իրավունք ունի իր թրի սրությունը ստուգելու ցանկացած քրիստոնյայի պարանոցի վրա»<sup>1</sup>:

Օսմանյան կայսրությունում ազգերի կառավարման քաղաքականությունը խարսխված էր ոչ թե իրավունքների և պարտականությունների օրենքի միավորիչ, այլ կրոնական պատկանելության՝ դոմինանտ-բաժանարար ուժի հենքի վրա և դարձավ օսմանյան վարչարարության ավանդական բնութագրիչ: Անշուշտ, XVIII դ. երկրորդ կեսին Արևմտյան Եվրոպայում տեղի ունեցող տնտեսական, գիտական և քաղաքական հեղափոխություններն իրենց հետքը թողեցին նաև Օսմանյան կայսրությունում ծավալվող քաղաքական զարգացումների վրա, և «միլլեթների» համակարգի տրանսֆորմացիան «փոքրամասնության» սկզբունքի համադրմամբ առավել խնդրահարույց գործընթացներից էր: XIX դարի զարգացումների ծիրում օսմանյան իշխանությունները ստիպված էին հաշվի նստել պետության, ազգի, հավասարության, քաղաքացիության արևմտյան հայեցակարգի, ինչպես նաև փոքրամասնության իրավունքների ընկալման հետ<sup>2</sup>: Այս նոր հայեցակարգը մատնանշում էր «միլլեթների» համակարգի վարչարարական ռացիոնալության ավարտ: Ըստ թուրք պատմաբանների՝ այս ամենի շնորհիվ անհետացան դասական օսմանյան կարգի՝ նիզամի բազմաթիվ տարրեր, որոնք աններդաշնակ էին մուսուլման և ոչ մուսուլման բնակչության հարաբերություններում<sup>3</sup>:

Այսպիսով, նախ և առաջ միլլեթ եզրույթն իրականում ձևական բառապաշարի մաս էր կազմում և օգտագործվում արտասահմանյան գրագրության մեջ: Հարց է ծագում. ինչու է բառն օգտագործվել մեկ ոլորտում, բայց ներքին օգտագործման համար ունեցել բազմաթիվ հոմանիշներ: Նախ՝ այն ուներ սուվերեն խորհրդանիշ, իսկ ինքնավարությունը բնորոշ էր սուլթանին, օտար քրիստոնյա տիրակալներին, ուստի այն կարող էր շնորհվել անհատներին արժանիքների համար, բայց ոչ երբեք լայն զանգվածներին: Անհատների դեպքում այն հաճախադեպ էր շնորհվում հրեաներին, որն անշուշտ ունի իր բացատրությունը. եզրույթի համաժամանակյա կիրառումը երկրում և երկրից դուրս բնակվող քրիստոնյաների նկատմամբ կարող էր ընկալվել որպես կրոնական միասնության խորհրդանիշ և ունենալ խիստ բացասական երանգավորում օսմանյան ղեկավարների համար: Տվյալ դեպքում հրեաները չունեին ինքնավար ղեկավար կամ առաջնորդ, հետևաբար դրա կիրառումը նրանց նկատմամբ չէր կրի քաղաքական ռիսկ: Դժբախտաբար հարյուր տարվա ընթացքում այս եզրույթը մշտապես շրջանառվել է: Վարչական հստակ եզրույթի բացակայությունը փաստում է նաև վարչական միավորի բացակայությունը: Փոխարենը կարող ենք նշել, որ կար մանկահավա-

<sup>1</sup> Մորգենթաու Ն., Դեսպան Մորգենթաուի պատմությունը, Երևան, 2012, էջ 211:

<sup>2</sup> St' u Lewis B., The Impact of French Revolution on Turkey, New York, 1965, p. 31-56:

<sup>3</sup> St' u Gökbilgin T., Tanzimat Hareketinin Osmanlı Müesseselerine ve Teşkilatına Etkileri // «Belleten», 1967, vol. 31, n° 121, s. 93-111:

քի, արքայի հստակ քաղաքականություն, և դրանք՝ որպես կայացած ինստիտուտներ, ունեին իրենց անվանումները՝ *devşirme*, *sürgün*: Հետևաբար այսպես կոչված «միլլեթների համակարգը» և «համայնքային համակարգը» իրականում ինստիտուտների խումբ չէին, այլ պարզապես ներքին օգտագործման կամայական մեխանիզմների մի շարք, որը խիստ փոփոխական էր տարածության և ժամանակի մեջ: Քանի դեռ հայերը պատրաստակամ էին իրականացնելու իրենց հարկային և քաղաքական պարտավորությունները, որոնք բխում էին համայնքային պատկանելությունից, Օսմանյան կայսրությունը չէր խառնվում երկրորդական հարցերի լուծմանը: Այլ կերպ ասած՝ անհատի իրավական, հասարակական-քաղաքական կարգավիճակն ամբողջովին կախված էր նրա կրոնական պատկանելությունից, չկար ընդհանրապես անհատականության ընկալում անգամ համայնքի ներսում, սակայն օսմանյան հպատակները բացառապես դիտարկվում էին որպես զիմմի բաղադրիչներ: Հետևաբար, Օսմանյան կայսրությունը վարչական քաղաքականությունն իրականացնում էր էթնոլեզվական տարբերությունները բացառող քաղաքականությամբ: Կարևոր է նաև նշել, որ մինչև XIX դարը Օսմանյան կայսրության մեջ չկար քաղաքացիության ընկալում. այն ձևավորվեց թանգիմաթի ժամանակաշրջանում: Պանօսմանիզմն իրականում կոչված էր ոչ թե ապահովելու հավասարությունը, այլ հետապնդում էր ազգային փոքրամասնությունները ձուլելու և տարրալուծելու նպատակ:

Ակնհայտ է ժամանակակից թուրքական և թրքամետ պատմագրության ու հրապարակախոսության՝ Օսմանյան կայսրության կրոնական հանդուրժողականությունն ընդգծելու միտվածությունը: Նման հրապարակումները հատկապես «առատ» էին Օսմանյան կայսրության 700-ամյակի նախօրեին. հատկանշական է մասնավորապես թուրք ամենահեղինակավոր հետազոտողներից մեկի՝ պրոֆեսոր Իլթեր Օրթայլիի միտումնավոր ռուսերենով հրատարակած, ակնհայտորեն հետխորհրդային լսարանի համար նախատեսված, հնարավորինս սեղմ ծավալում օսմանյան բիրտ իրողությունների իմիջը շղարշելուն նպատակաուղղված «ծրագրային» հոդվածը, որից ներկայացնում ենք հատվածներ. «Օսմանյան զիմմիների՝ հողագործների, արհեստավորների, հոգևորականության իրավունքների և արտոնությունների ծավալը հաջող նվաճումների ժամանակաշրջանում բավական մեծ էր և երբեմն գերազանցում էր շարիաթի նորմերը: Օսմանյան նվաճողները չեղյալ էին հայտարարում նախկին իրավասահմանումների դրույթները: Օսմանյան կայսրությունում սովորական հպատակների (ռայա) դրությունը կտրուկ տարբերվում էր հպատակների մյուս խմբի՝ զինվորականների (ասքերի) իրավական կարգավիճակից: Զինվորական կարգավիճակն ապահովում էր ոչ թե անհատի իրավունքները, այլ տվյալ սոցիալական հանրության անդամների որոշակի արտոնությունները, մասնավորապես «ասքերի» կատեգորիայի մեջ մտնող անձինք ազատված էին հարկեր վճարելուց և զենք կրելու իրավունք ունեին: Կարևոր է նշել, որ այս խմբի մեջ կարող էին ընդգրկվել

տարբեր ռասսաների և կրոնների պատկանող մարդիկ, որոնց թվում կային ոչ միայն զինվորականներ, այլև հոգևոր կոչում ունեցողներ՝ մուսուլմանական մուֆթիներ և մյուղերիսներ (հոգևոր ուսումնարանների դասախոսներ), հույն ուղղափառ եկեղեցու միտրոպոլիտներ և վարդապետներ, հրեական համայնքների գլխավոր ռաբիններ: Նույն կատեգորիային էին դասվում բուլղարական վոյնուկները (հեծելագորային զորամասերի օժանդակ զինվորները) և սուլթանական արքունիքում ծառայող ֆեներցի հույները: Մինչդեռ մուսուլմանները, որոնք զբաղվում էին հողագործությամբ, առևտրով կամ արհեստով, ինչպես և ոչ մուսուլման գյուղացիներն ու արհեստավորները պատկանում էին մյուս՝ ռայա կատեգորիային... Երկար ժամանակ միլլեթների միջև քիչ էին այն բախումները և հակամարտությունները, որոնք այդքան բնորոշ են ժամանակակից հասարակության՝ ինքնուրույնությունը պահպանել ձգտող և փոխադարձ ձուլվելուն դիմակայող տարբեր խմբերի գոյությանը: Չեզոք ոչ մուսուլմանները, ինչպես և իսլամում ոչ ուղղափառ ուղղությունների կողմնակիցները, որոնք հանդես չէին գալիս գոյություն ունեցող կարգի դեմ, գնահատվում էին Օսմանյան կայսրությունում ավելի բարձր, քան ընդդիմադիր տրամադրված մուսուլմանները»<sup>1</sup>:

Ա. Խառատյանն իրավացիորեն ընդգծել է. «Օսմանյան Թուրքիայում միլլեթները հանդես էին գալիս որպես կրոնադավանական կենտրոնացված միավորումներ, և ոչ մահմեդականների կառավարման այս ձևն առավելագույնս հարմարեցված էր կայսրության վարչատնտեսական կարգուկանոնին ու հողային-ռենտային հարաբերություններին... *Հպատակ ազգերի կրոնական ինքնավարությունն ուներ հարաբերական բնույթ, որը ոչ պակաս չափով ցուցադրում էր առաջինների իրավագուրկ իրավիճակը*»<sup>2</sup> (ընդգծումը մերն է – Լ. Մ., Ա. Մ., Դ. Հ.):

Օսմանահպատակների հավասարության և միլլեթների «կատարյալ» համակարգի շնորհիվ ստեղծված «հանդուրժողականության»<sup>3</sup> մթնոլորտի մասին թուրք պատմաբանների հորինած առասպելը նպատակաուղղված է արդարացնելու միլլեթների (կրոնական-ազգային) բաժանարար – խտրական և ի վերջո հասարակության խիստ բևեռացմանը հանգեցրած կայսրության քաղաքականությունը: Միլլեթների համակարգի թեմատիկայի ուսումնասիրությունը լրացուցիչ ազդակ է թուրքական ազգայնամոլության (Օսմանյան կայսրության՝ ազգային ու կրոնական փոքրամասնությունների հանդեպ թշնամական վերաբերմունքի և ցեղասպան քաղաքականության) ակունքների համակողմանի ընկալման համար:

<sup>1</sup> **Ортайлы И.**, Система миллетов в Османской империи: особенности формирования в устройстве // «Вестник Московского университета», серия «Востоковедение», 1995, № 3, с. 66-68.

<sup>2</sup> **Խառատյան Ա.**, Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դդ.), Երևան, 2007, էջ 368-369:

<sup>3</sup> **St' u Adıyeye N.**, Osmanlı Millet Sistemine Dair Tartışmalar ve Siyasal bir Uzlaşma Modeli Olarak Osmanlı Millet Sistemi, Yeni Türkiye 60/2014, s. 1-13:

**Լուսինե Տաակյան, Ալեքսանդր Տաֆարյան, Դիանա Այրապետյան – *О проблемах «системы миллетов» и статуса «армянского миллета» в Османской империи***

В статье рассматриваются наиболее спорные положения об истории формирования и роли «системы миллетов» в Османской империи в трудах турецких, западных и армянских исследователей, освещается также вопрос о выборе соответствующей терминологии. Опровегаются попытки представления «системы миллетов» – как проявления исключительной национально-религиозной толерантности в современной турецкой и протурецкой историографии и публицистике, подчеркивается, что относительная конфессиональная «автономия» в немалой степени выявляла бесправное положение подданных империи.

**Lusine Sahakyan, Alexander Safaryan, Diana Hayrapetyan – *On the Problems of “Millet System” and the Status of the “Armenian Millet” in the Ottoman Empire***

The article looks into the controversial statements connected with the formation and role of the “millet system” in the Ottoman Empire, put forward in works by Turkish, Western and Armenian researchers. It also aims to throw light upon the choice of appropriate terminology. All attempts to present the “millet system” as manifestation of exceptional national and religious tolerance in contemporary Turkish and pro-Turkish historiography and public writing are disproved. It is also stressed out that the relatively confessional “autonomy” to a certain extent reveals the impotence of the subjects of the Empire against arbitrary rule.

Ներկայացվել է 15.10.2019

Գրախոսվել է 21.10.2019

Ընդունվել է տպագրության 05.11.2019